ԻՆՉՊԵՍ ԿԱՏԱՐԵԼ ԳՐՔԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՏՎԵՐԸ

Նախ պետք է լինել համալսարանի գրադարանի ընթերցող-բաժանորդ, որի համար գրադարան պետք է ներկայացնել անձնագրի պատճենը և 3x4 չափսի լուսանկար:

Եթե Դուք գրադարանի գրանցված ընթերցող եք, գրքի էլեկտրոնային պատվերն իրականացնելու համար պետք է մուտք գործել համալսարանի կայք՝

http://www.vsu.am/ , այնուհետև ակտիվացնել ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ ցանկի ***Քարտադարան*** սեղմակը կամ ***ԳԻՏՈՒԹՅՈՒՆ – ԳՐԱԴԱՐԱՆ*** (ստորև ներկայացված են համապատասխան քայլերը).

Ակտիվացնելով Քարտադարան հղումը՝ մուտք կգործեք հետևյալ էջ.



Բաժանորդներ հղմանը սեղմելով՝ Ձեր առջև կբացվի հետևյալ պատուհանը.



Օգտագործող բաժնում պետք է մուտքագրել Ձեր ազգանուն-անունը լատինատառ՝ առանց տառաբացատի (օրինակ՝ azganunanun):

Գաղտնագիր բաժնում պետք է մուտքագրել. *աշխատակիցները*՝ ծննդյան տարեթիվը, *ուսանողները*՝ անձնագրի տվյալներն ամբողջությամբ (սերիան և համարը)[1], ապա սեղմել

Մուտք գործել համակարգ

Ամեն ինչ հաջողությամբ կատարելուց հետո կբացվի հետևյալ պատուհանը.

[1] Ցանկացած խնդրի դեպքում մոտենալ քարտարանի պատասխանատու օպերատորին:

Ահա և գրքի պատվերի բաժինը՝

Պատվիրել նոր գիրք

Ակտիվացնելով այն՝ կտեսնեք.



Գույքահամար բաժնում գրվում է գրքի գույքահամարը (ինվենտարային համար). այս տողը լրացնելը պարտադիր չէ:

Հեղինակ բաժնում գրվում է որոնվող գրքի հեղինակի ազգանունը (կարելի է նշել նաև անվան առաջին տառը). կազմողը կամ խմբագիրը հեղինակ համարվել չեն կարող, հետևաբար այս բաժնում չեն լրացվում:

Վերնագիր բաժնում հնարավորինս ճշգրիտ գրվում է որոնվող գրքի վերնագիրը:

Բաժին տողը լրացվում է այն ժամանակ, երբ ընթերցողը.

- տեղյակ է գրադարանային դասիչներին,
- հստակ գիտի, թե որ բաժնի գիրք է իր որոնածը,
- ցանկանում է տեղեկանալ, թե որոշակի բնագավառի վերաբերյալ գրադարանում ինչ գրականություն է առկա:

Գիրքը պատվիրելու ժամանակ նշվում է այն գրադարանից վերցնելու օրը և ժամը:

Հնարավոր է, որ Ձեր պատվիրած գիրքն արդեն գտնվում է մեկ այլ ընթերցողի մոտ կամ ընթերցասրահում, այդ դեպքում ծրագիրը Ձեզ այդ մասին կհայտնի և չի թույլատրի իրականացնել պատվերը:

Պատվերը չի իրականացվի նաև այն դեպքում, եթե Ձեզ մոտ առկա է թվով 7 գիրք (ակտիվ գրքեր):

Ակտիվացնելով

Ցույց տալ իմ ակտիվ գրքերը

կտեսնեք Ձեր վերցրած գրքերի ցանկը, օրինակ՝

Վերադառնալ հիմնական էջ

Իմ ակտիվ գրքերը

id	Գույքահամար	Բաժին	Հեղ_նիշ	Հեղինակ	Վերնագիր
6774	70519	34C4(C43)	Հ-24		Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Մաս 1.
15059	19078-21	4AP(07)	Գ-67	Գյուլբուդաղյան Ս.Վ.	Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա
5494	2204-նվ.	33(07)	Խ-28	Խաչատրյան Գ.Հ.	Տնտեսագիտության տեսություն: Ուսումնական ձեռնարկ
3539	19888-32	15	Ն-21	Նալչաջյան Ա.Ա.	Ընդհանուր հոգեբանության հիմունքներ: Գիրք 1.
39342	65759	AP1	Շ-66	Շիրվանզադե Ալ.	Երկեր 5 հատորով: Հատոր 1. Պատմվածքներ: Վիպակներ

Ակտիվացնելով

Ցույց տալ իմ պատվերները

կտեսնեք Ձեր պատվիրած գրքերի ցանկը, օրինակ՝


Վերադառնալ հիմնական էջ

Իմ պատվիրած գրքերը

id	Գույքահամար	Բաժին	Հեղ_նիշ	Հեղինակ	Վերնագիր
40586	72051	AP2	Ս-41	Սևակ Պ.	Երկերի ժողովածու 6 հատորով: Հատոր 2.

Ակտիվացնելով

Ցույց տալ իմ հանձնած գրքերը

կտեսնեք Ձեր հանձնած գրքերի ցանկը, օրինակ՝


Վերադառնալ հիմնական էջ

Իմ հանձնած գրքերը

id	Գույքահամար	Բաժին	Հեղ_նիշ	Հեղինակ	Վերնագիր
6793	73503	34C5(C43)	Հ-24		Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս
121298	Ո35319	P1	Տ-87	Тургенев И. С.	Отцы и дети
123082	Ո995-пд.	P1	Ч-56	Чехов А.П.	Дом с мезонином. Рассказы и повести
6637	75745	34C65(C43)	Լ-14	Լալայան Կ.Ա.	Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Ուսումնական ձեռնարկ

Ակտիվացնելով

Փոխել իմ ծածկագիրը

կբացվի գաղտնագիրը փոխելու համար նախատեսված հետևյալ պատուհանը.


Վերադառնալ հիմնական էջ

Նոր գաղտնագիր

Կրկնել գաղտնագիրը

Փոփոխել գաղտնագիրը

ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՎԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՔԱՐՏԱԴԱՐԱՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Վանաձոր
2021